Ճապոնիա-ՄԱԶԾ համատեղ ծրագրի շրջանակներում բացման արարողությունները Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում

2026 թվականի մայիսի 12-ին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նաթիա Նացվլիշվիլիի հետ միասին այցելեցին Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր, որտեղ իրականացվում է Ճապոնիայի կառավարության և ՄԱԶԾ-ի միջև համատեղ ծրագիր:

Ճամբարակի ջրամբարի և Չարենցավանի հանրային տարածքի և խաղահրապարակի բացման արարողությունները տեղի ունեցան «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և ընդունող համայնքներին աջակցության ծրագրի» (3 միլիոն ԱՄՆ դոլար) շրջանակներում: Ճամբարակ համայնքում (Գեղարքունիքի մարզ) բացվել է 11,000 մ³ ծավալով նոր ջրամբար, որը, ինչպես կանխատեսվում է, կվերականգնի մինչև 200 հեկտար հողատարածքի ոռոգումը և կօգտագործվի մոտ 200 տնային տնտեսությունների կողմից: Բացի այդ, համայնքի մանկապարտեզում և փրկարարական ծառայությունում տեղադրված արևային էներգիայի համակարգերը ևս կնպաստեն էներգետիկ դիմակայունության բարձրացմանը և կարևոր ծառայությունների անխափան ապահովմանը: Ընդհանուր առմամբ, Գեղարքունիքի մարզում տեղադրվել է ինը համակարգ, որոնցից ութը ծառայում են Ճամբարակ համայնքին: Չարենցավան համայնքում (Կոտայքի մարզ) ստեղծվել է նոր հանրային տարածք և խաղահրապարակ՝ սոցիալական համախմբվածությունը, ներառումը և համայնքային փոխգործակցությունը խթանելու համար, ինչը օգուտ կբերի և տեղահանված ընտանիքներին, և ընդունող համայնքներին:

Իր ելույթում դեսպան Առկին ընդգծեց, որ այս նախաձեռնությունները միայն ենթակառուցվածքների մասին չեն, այլ նաև այն մասին, թե ինչի կարելի է հասնել, երբ համայնքները, կառավարությունները և միջազգային գործընկերները համատեղ աշխատում են՝ կարևորելով Ճապոնիա-ՄԱԶԾ համագործակցության դերը Հայաստանում կլիմայական դիմակայունության, կայուն զարգացման և մարդկային անվտանգության ապահովման գործում:

Դեսպան Առկիի ելույթը

Կարմիր ժապավենի կտրումը

Խմբային նկար Ճամբարակի ջրամբարի մոտ

Խմբային նկար մանկապարտեզում

Դեսպանը փրկարար ծառայության թիմի հետ

Պարային կատարում Չարենցավանում

Ճամբարակի ջրամբարը

Ծրագրի վահանակը Ճամբարակի ջրամբարում